

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՌ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԻՐԶՈՅԱՆ

**ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.05- Քրեական իրավունք, կրիմինալոգիա,
քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսություն**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГОР АНДРАНИКОВИЧ МИРЗОЯН

**КРИМИНОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ КОНТРАБАНДЫ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

АВТОРЕФЕРАТ

**Диссертация на соискание ученой степени кандидата юридических
наук по специальности**

**12.00.05- “Уголовное право, криминология,
уголовно-исполнительное право”**

ЕРЕВАН 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Ս.Վ. Առաքելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Ա.Հ. Գաբրիլյան**
իրավ. գիտ. թեկնածու
Վ.Ա. Շահնազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական)
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. նոյեմբերի
17-ին՝ ժամը 14³⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025,
ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հոկտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ

Ա.Ա. Մանասյան

**Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете**

Научный руководитель:

доктор юридических наук,
профессор **С.В. Аракелян**

Официальные оппоненты:

доктор юридических наук,
профессор **А.Г. Габузян**
кандидат юридических
наук **В.А. Шагназарян**

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет
Защита состоится 17-ого ноября 2017г. в 14:30 часов на заседании
специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г.Ереван, ул. Алека Манукиана 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 17 октября 2017г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А.А. Манасян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: «Մաքսանենգություն» (իտալերեն՝ «contraband», այսինքն՝ «contra» – ընդդեմ և «band» – կառավարական հրամանագիր) եզրույթը հայտնի է մարդկությանն անհիշելի ժամանակներից: Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր երկրներում այն հասկացվում է որպես սահմանով (պետական կամ մաքսային) ապրանքների, արժեքների կամ այլ առարկաների ապօրինի տեղափոխում: Ընդ որում, 18–19-րդ դարերում տվյալ հասկացությունն արդեն ոչ միայն արտացոլվել է մաքսային տարբեր փաստաթղթերում, այլև առավել կոնկրետացվել և հստակեցվել են դրա ձևակերպումները:

Պատմությունը, սակայն, վկայում է, որ ժամանակի ընթացքում մաքսավորների համար ավելի ու ավելի դժվար է դառնում հանրորեն վտանգավոր այդ երևույթի դեմ պայքարելը: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մաքսանենգությամբ հիմնականում զբաղվում են ոչ միայն համարձակ և տաղանդավոր, այլև օրենքներին ու իրավակարգն ապահովողների հոգեբանությանը քաջատեղյակ մարդիկ:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության ինտեգրումը միջազգային տնտեսական հարաբերությունների մեջ երկրի զարգացման հիմնական ուղղություններից է: Բանն այն է, որ դա ներքին շուկան տարատեսակ ապրանքներով հագեցնելու, օտարերկրյա գործընկերների ներդրումները խթանելու, հայրենական արտադրության ապրանքներն արտասահմանում իրացնելուց գոյացած արտարժույթային մուտքերն ապահովելու հիմնական միջոցներից մեկն է: Հիշատակված հանգամանքներն էլ, իրենց հերթին, կոչված են նպաստելու Հայաստանում ազատական շուկայական հարաբերությունների ամրապնդմանը և զարգացմանը, ինչպես նաև տնտեսության ոլորտում առկա ճգնաժամային երեույթների ու գործընթացների հաղթահարմանը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, սակայն, որ արտաքին ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնումն ուղեկցվում է տվյալ ոլորտում կատարվող իրավախախտումների թվի զգալի ավելացմամբ: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում մաքսանենգության դեպքերը: Այդ մասին է վկայում նաև պաշտոնական վիճակագրությունը: Մասնավորապես, 2014 թվականին, նախորդ տարիների համեմատ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է քրեորեն պատժելի մաքսանենգությունների աննախադեպ աճ: Ընդ որում, 2005 թ.-ի համեմատ, նշված տարում մաքսանենգությունների աճը կազմել է +164, 2006 թ.-ի համեմատ՝ +152, 2007 թ.-ի համեմատ՝ +137, 2008 թ.-ի համեմատ՝ +145, 2009 թ.-ի համեմատ՝ +142, 2010 թ.-ի համեմատ՝ +93, 2011 թ.-ի համեմատ՝ +111, 2012 թ.-ի

համեմատ՝ +162, իսկ 2013 թ.-ի համեմատ՝ +118: Մինևույն ժամանակ, 2015 թ. ընթացքում գրանցվել է մաքսանենգության 126 դեպք: Այսինքն, նախորդ տարվա համեմատ քննարկվող հանցագործությունների թիվը նվազել է 88-ով: Մինչդեռ, մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածն ընդգրկող մյուս տարիների համեմատությամբ, 2015 թվականին նույնպես արձանագրվել է մաքսանենգությունների ավելի մեծ թիվ: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական գործող օրենսգրքում 2016 թվականի մայիսին փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո ընկած ժամանակահատվածին, ապա պետք է փաստել, որ այդ ընթացքում (2016թ. հոկտեմբեր ամիսը ներառյալ) գրանցվել է քրեորեն պատժելի մաքսանենգության ընդամենը մեկ դեպք, որը կապված է առանձնապես խոշոր չափերով կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգության հետ:

Նման բացասական միտումները պայմանավորված են մի շարք հանգամանքներով: Մասնավորապես՝ վերջին տարիներին սոցիալ-տնտեսական իրավիճակը սրվել է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև հարևան երկրներում ու աշխարհի բազմաթիվ այլ պետություններում: Դրանց բնակիչների մեծ մասի կենսամակարդակն էապես նվազել է: Մարդկանց գիտակցության մեջ արմատավորվել է ամեն կերպ հարստանալու ձգտումը, իսկ նրանց շրջանում լայն տարածում է ստացել պատկերացումն այն մասին, որ կենսական տարբեր խնդիրների լուծման համար հակաիրավական որոշ արարքների կատարումը երբեմն ոչ միայն ընդունելի է, այլև անհրաժեշտ կամ անխուսափելի: Զգալիորեն ակտիվացել են արտաքին տնտեսական գործունեության անբարեխիղճ մասնակիցները, որոնք առավել հաճախ և հմտորեն են սկսել խուսափել մաքսային օրենսդրության պահանջները, դրանցով սահմանված մաքսային վճարումները կատարելուց:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև մաքսանենգության լատենտայնության բարձր մակարդակը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև աշխարհի գրեթե բոլոր պետություններում: Բանն այն է, որ նման պայմաններում բազմաթիվ հանցվոր արարքներ չեն արտացոլվում պաշտոնական վիճակագրական հաշվետվություններում՝ նպաստելով անպատժելիության մթնոլորտի ձևավորմանն ու խորացմանը:

Բացի դրանից, ՀՀ մաքսային սահմանով ուղևորների և բեռների փոխադրման ծավալները վերջին տարիներին էապես աճել են: Մինչդեռ, երկրում առկա տնտեսական խնդիրների, ճգնաժամային տարբեր երևույթների և գործընթացների պայմաններում պետությունն օբյեկտիվորեն ի վիճակի չէ պատշաճ ֆինանսավորելու մաքսային և իրավապահ մարմինների գործունեությունը: Բնականաբար, դժվարանում է նաև մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում տեսանելի դրական արդյունքների ապահովումը:

Իրավիճակն ավելի է բարդանում օրենսդրական դաշտում առկա թե-

րությունների և բացթողումների հետևանքով: Մասնավորապես, մեր կողմից ՀՀ քրեական օրենսգրքի և մաքսային օրենսդրության համապատասխան իրավակարգավորումների, ինչպես նաև քրեական գործերի նյութերի և փորձագետների ու պրակտիկ աշխատողների հարցման արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ դեպքերում իրավակիրառողների գործունեության անարդյունավետությունը պայմանավորված է հենց օրենսդրական կարգավորումների անկատարությամբ, որն առկա է նաև քրեական օրենքում վերջերս կատարված փոփոխություններից և լրացումներից հետո: Այս առումով մնում է հուսալ, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների ներկայիս փուլում հնարավորինս կլուծվի նաև վերոհիշյալ հիմնախնդիրը:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ մաքսանենգության դեմ պայքարի հենց մատնանշված խնդիրների հրատապ լուծման անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն հետազոտության թեմայի արդիակա-նությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Մաքսանենգության քրեաիրավական և կրիմինալոգիական տարատեսակ հիմնախնդիրներին իրենց աշխատություններում անդրադարձել են Լ.Ն. Անիսիմովը, Տ.Ա. Բոգոյուբովան, Մ.Մ. Բոգուլավսկին, Վ.Վ. Բովկունը, Ա.Ի. Բոյկոն, Ա.Ա. Գաբիանին, Ս.Վ. Դուշկինը, Ռ.Վ. Զվյագինցևը, Ռ.Վ. Լուկաշովը, Բ.Պ. Կալաչովը, Յու.Գ. Կիսլովսկին, Վ.Մ. Կոլբակը, Ա.Պ. Պոլեժանը, Ա.Վ. Մասլովան, Գ.Մ. Մինկովսկին, Ա.Ա. Մուզիկան, Է.Ֆ. Պոբեգայլոն, Վ.Պ. Ռևինը, Լ.Պ. Սբիրունովը, Ա.Ն. Սերգենը, Բ.Վ. Վոլժենկինը, Ա.Լ. Տրոշինը, Բ.Պ. Յելինսկին, Վ.Ֆ. Յեպելը, Վ.Մ. Ուզարովը, Վ.Ի. Օմիգովը և այլոք:

Այդ առումով հարկ է հատուկ նշել նաև Ա.Ֆ. Գոլյուբևի, Վ.Վ. Լուկյանովի, Մ.Ա. Կոչուբեյի, Լ.Յու. Ռոդինայի և Ա.Ա. Սերգենայի դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունները, որոնք պարունակում են մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներին վերաբերող առավել արդիական մոտեցումներ:

Նշված հեղինակների աշխատություններն, անկասկած, լուրջ ներդրում են մաքսանենգության դեմ պայքարի հետ կապված տարատեսակ խնդիրների հետազոտության գործում: Դրանցում արտահայտված դիրքորոշումները, սակայն, հիմնականում կա՛մ հնացած են, կա՛մ չեն վերաբերում հայաստանյան կրիմինալոգիական իրականությանը: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունում նշված հիմնախնդիրների վերաբերյալ հատուկ համալիր հետազոտություններ չեն իրականացվել: Այնուամենայնիվ, սույն ատենախոսությամբ ևս հետազոտության թեման ամբողջապես չի սպառվում, և քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ հետագա գիտական ուսումնասիրությունների կարիք են զգում:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության **առարկան են** ՀՀ-ում կատարվող մաքսանենգությունների վիճակի, կառուցվածքի, շարժընթացի դրսևորումներն ու օրինաչափությունները, քննարկվող հանցանքները կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունները, տվյալ հանցագործության տարբեր դրսևորումներին նպաստող գործոնները և դրանց կանխարգելման ընդհանուր-սոցիալական ու հատուկ-կրիմինալոգիական բնույթի միջոցառումները: Հետազոտության **օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում կատարվող մաքսանենգությունների կրիմինալոգիական հիմնախնդիրներն են:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսական սույն հետազոտության **հիմնական նպատակը** Հայաստանի Հանրապետությունում կատարվող մաքսանենգությունների կրիմինալոգիական հիմնախնդիրների համալիր վերլուծությունն է:

Նշված նպատակի իրականացման ձգտումը պայմանավորել է հետազոտական հետևյալ **հիմնական խնդիրների** առաջադրման և լուծման անհրաժեշտությունը՝

- վերլուծել մաքսանենգության հատկանիշներն ըստ ՀՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների, ինչպես նաև միջազգային համապատասխան իրավակարգավորումների,

- ուսումնասիրել ՀՀ-ում կատարվող մաքսանենգությունների որակական և քանակական ցուցանիշները՝ վիճակը (մակարդակը), կառուցվածքն ու շարժընթացը,

- հետազոտել մաքսանենգություն կատարողների անձը բնութագրող սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական առանձնահատկությունները,

- վեր հանել ՀՀ-ում կատարվող մաքսանենգություններին, դրանց առանձին դրսևորումներին նպաստող՝ ինչպես մակրոմիջավայրում, այնպես էլ միկրոմիջավայրում առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, դրանց տարածվածության ու ազդեցության աստիճանը,

- բացահայտել ՀՀ-ում մաքսանենգությունների ընդհանուր-սոցիալական և հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման հիմնական ուղղությունները,

- մշակել ՀՀ քրեական գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված տեսականորեն հիմնավորված առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում իմացության դիալեկտիկական, տրամաբանական, անալիզի, սինթեզի, անալոգիայի, պատմաիրավական, համեմատական-իրավական, ձևական-իրավաբանական, վիճակագրական, հասարակա-

գիտական և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդները: Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև վիճակագրական տվյալների վերլուծության, հարցման, անկետավորման, համեմատական-իրավական վերլուծության և փաստաթղթերի հետազոտության մեթոդները:

Ատենախոսության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել կրիմինալոգիայի, քրեական, քրեակատարողական, վարչական, մաքսային, միջազգային իրավունքի ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները: Օգտագործվել են նաև գիտագործնական համաժողովների, միջազգային գիտաժողովների, սեմինարների նյութեր:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական, մաքսային, քրեակատարողական օրենսգրքերը, օրենսդրական ու ենթաօրենսդրական այլ ակտերը, Մաքսային միության մաքսային օրենսգիրքը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության երկրների, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Սան-Մարինոյի, Թուրքիայի, Իրանի, Չինաստանի, Ճապոնիայի և արտասահմանյան մի շարք այլ երկրների քրեական օրենքները: Բացի այդ, հատուկ անդրադարձ է կատարվել մաքսանենգության դեմ պայքարի միջազգային հիմնական իրավակարգավորումներին:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության տարբեր ատյանների դատարաններում 2005-2014 թթ. ընթացքում քննության առարկա դարձած՝ մաքսանենգության վերաբերյալ 150 քրեական գործերի, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրության արդյունքները: Միևնույն ժամանակ ուսումնասիրվել, վերլուծվել և ամփոփվել են հանցավորության քննարկվող տեսակի վերաբերյալ այլ տարածաշրջաններում և այլ հեղինակների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները:

Մաքսանենգությունների դեմ պայքարի արդյունավետության գնահատման, տվյալ գործընթացում առկա թերությունների, բացթողումների, ինչպես նաև դրական փորձի բացահայտման նկատառումներով նախապես մշակված ծրագրով հարցազրույցներ են անցկացվել 10 դատավորների, իրավապահ մարմինների 20 աշխատակիցների, մաքսային 20 ծառայողների և տվյալ հանցագործության համար դատապարտված 20 անձանց հետ:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության **գիտական նորույթը** նախ և առաջ պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում կատարվող մաքսա-

նենգությունների կրիմինալոգիական հիմնախնդիրների տեսական համալիր ուսումնասիրությունների բացակայությամբ: Մասնավորապես, բազմաթիվ այնպիսի հարցեր, ինչպիսիք են մաքսանենգությունների ներկայիս վիճակը, կառուցվածքը, շարժընթացն ու միտումները, քննարկվող հանցավոր արարքներին նպաստող գործոնները, դրանք կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունները, նշված հանցավոր դրսևորումների կանխարգելման հիմնական ուղղությունները և այլն, ներկայումս շատ քիչ են ուսումնասիրված:

Միևնույն ժամանակ, կատարելագործման լուրջ կարիք ունի Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը (հատկապես՝ քրեական և մաքսային), ինչն առավել արդիական է դառնում ոչ միայն հանրապետությունում իրականացվող սահմանադրական և դատաիրավական ներկայիս բարեփոխումների, այլև Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված հարցերի լույսի ներքո:

Աշխատանքի գիտական նորոյթն արտահայտվում է նաև ***պաշտպանության ներկայացվող հեղկյալ դրույթներում՝***

1. Մաքսանենգությունը միջազգային բնույթի հանցագործություն է, սակայն դրա միջազգայնորեն ընդունված միասնական հասկացության սահմանում գոյություն չունի: Մինչդեռ քննարկվող երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է մաքսանենգության միասնական և համապարփակ հասկացության սահմանումը միջազգային իրավական համապատասխան փաստաթղթում: Մասնավորապես, առաջարկվում է «Մաքսանենգության դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիայի ընդունմանն ուղղված միջոցներ ձեռնարկել, և դրա շրջանակներում սահմանել մաքսանենգության հետևյալ հասկացությունը. «Մաքսանենգությունը՝ ապրանքների, առարկաների կամ գույքի ապօրինի տեղափոխումը մաքսային սահմանով, որն իրականացվում է դրանք մաքսային հսկողությունից թաքցնելու կամ այն շրջանցելու ցանկացած եղանակով»:

2. ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալներով մաքսանենգությունների բացահայտման տոկոսը ուսումնասիրելիս տպավորություն է ստեղծվում, թե այն բավականին բարձր է, ինչով պայմանավորված՝ կարելի է ենթադրություն անել, որ դրանց դեմ պայքարը բավականին արդյունավետ է իրականացվում: Մինչդեռ, տվյալ հանգամանքը պայմանավորված է հանցագործությունների հաշվառման-գրանցման աշխատանքներում առկա մեկ առանձնահատկությամբ, որը կապված է գրանցված հանցավոր արարքների բացահայտման տոկոսը հաշվարկելու հետ: Մասնավորապես, վերջինիս պարագայում՝ նախ՝ գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակից հանվում է քննության ընթացքում գտնվող հանցագործությունների վերաբերյալ ցուցանիշը, այնուհետև՝ ստացված արդյունքի հարաբերությամբ,

հաշվարկվում է բացահայտվածների մասնաբաժինը: Մինչդեռ, հաշվարկի նման տարբերակն արդարացված չէ, քանզի բացահայտված հանցագործությունների մասնաբաժինը որոշելու վրա չպետք է ազդեցություն ունենան քննության ընթացքում գտնվող հանցագործությունների վերաբերյալ ցուցանիշները: Ուստի, բացահայտված հանցագործությունների իրական մասնաբաժինը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել միայն հաշվետու տարում փաստացի գրանցված և բացահայտված հանցավոր արարքների քանակը:

3. Մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու նպատակով համապատասխան միջոցառումներ մշակելիս և իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել «Հ-ում հանցավորության տվյալ դրսևորմանը նպաստող և դրա դեմ պայքարի արդյունավետությանը խոչընդոտող հետևյալ հիմնական գործոնները՝

- համապատասխան պարտադիր վճարումների (ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքերի և այլն) չարդարացված մեծ չափերը, ինչը հաճախ գործարարների կողմից ստվերային տնտեսության դաշտ տեղափոխվելու պատճառ է հանդիսանում.

- ազգային տնտեսության ցածր մրցունակությունը, որպես կանոն, երկրում արտադրվող ապրանքների ցածր որակը և բարձր ինքնարժեքը, որի պատճառով հաճախ ավելի մեծ պահանջարկ են վայելում արտասահմանյան ապրանքները.

- մաքսանենգությամբ զբաղվողների քաջատեղյակ լինելը մաքսային հսկողության տեխնոլոգիական և այլ նրբություններին, տվյալ ոլորտում առկա բարդությունները, որոնք գլխավորապես կապված են տարբեր իրավիճակներում համապատասխան ծառայողների կողմից օպերատիվ որոշումներ կայացնելու անհրաժեշտության հետ և որից հմտորեն օգտվում են հանցավորները, մաքսանենգությամբ զբաղվողների կողմից մաքսանենգության առարկան մաքսային հսկողությունից թաքցնելու հնարամիտ եղանակներ ու հնարքներ օգտագործելը (մի քանի գաղտնարաններ և այլն).

- մաքսային և իրավապահ մարմինների աշխատակիցների զգալի մասի մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակն ու մաքսանենգության կանխարգելմանն ուղղված գործունեություն իրականացնող համապատասխան կառույցների միջև պատշաճ համագործակցության բացակայությունը.

- Մաքսանենգության մեջ մաքսային ծառայողների և այլ պաշտոնատար անձանց մի զգալի մասի ակտիվ ներգրավվածությունը, ինչը նպաստում է քննարկվող հանցատեսակի լատենտայնությանը:

4. Հայաստանի Հանրապետությունում մաքսանենգությանը նպաստող գործոնների և մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետությանը խո-

չընդոտող գործոններով պայմանավորված հատկապես կարևորվում են մաքսանենգության հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման հետևյալ միջոցառումները՝

– օպերատիվ-հետախուզական համապատասխան միջոցառումների պատշաճ կազմակերպում ու իրականացում, որոնց արդյունավետությունը պայմանավորված է համապատասխան տեղեկատվության առկայությամբ, դրա մշտական հավաքմամբ և ամփոփմամբ: Տեղեկատվությունը ստանալու աղբյուրների շարքում հատկապես պետք է կարևորել միջպետական համագործակցության շրջանակներում այլ պետությունների համապատասխան կառույցների կողմից տրամադրվող տեղեկությունները, մաքսային սահմանին տեղադրված տեսաձայնագրատող տեխնիկական միջոցներով ստացվող տեղեկատվության մշտադիտարկման արդյունքները, իրավապահների հետ համագործակցող գաղտնի գործակալների հաղորդումները, ձեռքալավված կամ կալանավորված անձանց հարցաքննության նյութերը, «թեժ գծի» միջոցով տրված անանուն հաղորդումները, պարբերաբար իրականացվող գիտական հետազոտությունների տվյալները.

– մաքսային ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, որը պետք է ներառի համապատասխան օրենսդրության և միջազգային ակտերի դրույթների ուսուցանումը, մաքսանենգության իրականացման, մաքսանենգության առարկան մաքսային հսկողությունից թաքցնելու եղանակների, մաքսային հսկողությունը շրջանցելու հնարքների հետ ծանոթացնելը և այլն:

5. Կանխարգելիչ միջոցառումների պլանավորման և իրականացման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն անձանց, որոնց կողմից մաքսանենգություն կատարելու հավանականությունը ավելի բարձր է: Դրանք են՝

1) պաշտոնատար անձինք, ովքեր ծառայության բերումով գործ ունեն ներմուծվող կամ արտահանվող ապրանքների, առարկաների կամ դրամական միջոցների փոխադրման, ընդունման կամ դրանք հիմնավորող փաստաթղթերի ձևակերպման հետ,

2) մաքսային գործակալները, հաշվապահական հաշվառում իրականացնողները, վարորդները, բանվորները, ովքեր անմիջականորեն ապահովում են ներմուծվող կամ արտահանվող ապրանքների կամ առարկաների ձևակերպումը կամ տեղափոխումը, մասնավոր ձեռնարկատերերը, ովքեր գործունեություն են ծավալում արտաքին առևտրի ոլորտում և աշխատանքի բերումով հաճախ են հատում մաքսային սահմանը կամ Եվրասիական տնտեսական միության այլ երկրների հետ պետական սահմանը,

3) մաքսանենգության կամ թմրամիջոցների, ռադիոակտիվ նյութերի, զենքի ապօրինի շրջանառության համար պատասխանատվության ենթարկ-

ված, պատիժ կրած, ինչպես նաև ոչ արդարացնող հիմքերով նշված հանցագործությունների համար պատասխանատվությունից ազատված անձինք:

6. Մաքսային հսկողության որոշակի ձևերից ազատված անձի կողմից կամ մաքսային հսկողության սահմանված ձևերից ազատված ապրանքների կամ տրանսպորտային միջոցների՝ մաքսային սահմանի վրայով տեղափոխման համար լիազորված անձանց կողմից կատարվող մաքսանենգությունների կանխման առումով անհրաժեշտ է հրաժարվել հատուկ կարգավիճակ ունեցող համապատասխան անձանց անձեռնմխելիության գաղափարից և սահմանել նրանց մաքսային հսկողության ենթարկելու իրավական նախապայմանների հնարավորինս լայն, բայց հստակ շրջանակ:

7. Ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու առումով խիստ հրատապ է դրանց շրջանառությունը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական գոյություն ունեցող ակտերի լրամշակումն ու հստակեցումը, ինչպես նաև նոր ակտերի մշակումը և ընդունումը: Մասնավորապես, անհրաժեշտ է շտապփույթ մշակել և ընդունել «Ռադիոակտիվ նյութեր, թափոններ և ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքեր ձեռք բերելու, պահելու, օգտագործելու, հանձնելու, իրացնելու, ներմուծելու, արտահանելու, պահեստավորելու, փոխադրելու, վերամշակելու, վնասագերծելու կամ ոչնչացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Բացի այդ, անհրաժեշտ է պարբերաբար լրամշակել դրանց շրջանառությունը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով սահմանված համապատասխան ցանկերը՝ դրանցում ներառելով ռադիոակտիվ նյութերի նոր այն տեսակները, որոնք տարբեր պատճառներով դուրս են մնացել այդ ցանկերից:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության **տեսական նշանակությունը** կայանում է նրանում, որ այն հայրենական գիտության մեջ մաքսանենգությունների կրիմինալոգիական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Տվյալ հետազոտության **գործնական նշանակությունն** այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել և կիրառվել՝

- ՀՀ գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում,

- իրավակիրառ պրակտիկայում՝ մաքսանենգություններին նպաստող գործոնների բացահայտմանն ու հանցավոր այդ վարքագծի տարբեր դրսևորումների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ մշակելիս և դրանց վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս ու պատիժ նշանակելիս,

– Հայաստանի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համալիր ծրագրեր մշակելիս և իրականացնելիս,

– գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ քրեական իրավունք, կրիմինալոգիա և մաքսային իրավունք դասավանդելիս,

– մեթոդաբանական և կիրառական այլ նպատակներով:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Աշխատության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական սույն աշխատության կառուցվածքը պայմանավորված է դրա շրջանակներում իրականացված հետազոտության նպատակներով և խնդիրներով: Այն պատրաստված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու իրավական ակտերի ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, բացահայտված է աշխատության գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության գիտական նպատակն ու խնդիրները, օբյեկտը, մեթոդաբանական հիմքը և տեսական բազան, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ <Մաքսանենգության ընդհանուր բնութագիրը> վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ <Մաքսանենգությունն ըստ ՀՀ քրեական օրենսդրության> վերտառությամբ, հեղինակը հիմնվելով տեսական աղբյուրների վրա վերլուծում է մաքսանենգության հասկացությունն ըստ ներպետական գործող քրեական օրենսդրության՝ վեր հանելով դրանց առանձնահատկությունները:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ <Մաքսանենգությունն ըստ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության> վերտառությամբ, հեղինակը քննարկում է ինչպես հարևան, այնպես էլ մի շարք այլ պետությունների քրեական օրենսդրության անդրադարձը մաքսանենգության հասկացությանը և դրանց առանձնահատկություններին:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ <Մաքսանենգության համար պատասխանատվության միջազգային իրավական կարգավորումը> վերտա-

ռութեամբ հեղինակը քննարկում է այդ կապակցութեամբ գործող միջազգային իրավական փաստաթղթերը և փորձում սահմանել մաքսանենգութեան միասնական հասկացությունը, ինչպէս նաև տալ դրա դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայի ընդունման հրատապութեան հիմնավորումը:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ <Մաքսանենգությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը> վերտառութեամբ, հեղինակը ուսումնասիրություն է կատարել դրանց վիճակի, կառուցվածքի և դինամիկայի վերաբերյալ, ինչի արդյունքում հանգել որոշակի եզրակացությունների:

Առաջին գլխի հինգերորդ պարագրաֆում՝ <Մաքսանենգություն կատարողի անձը բնութագրող առանձնահատկությունները> վերտառութեամբ հեղինակը խորը վերլուծություն է կատարել վերջին տասը տարիների ընթացքում մաքսանենգություն կատարող անձանց ինչպէս անձնային, այնպէս էլ այլ հատկանիշների վերաբերյալ, որի արդյունքում հանգել է ընդհանուր եզրակացութեան վերջիններիս տարիքի, սեռի, քաղաքացիութեան, հանրոքէն վտանգավոր արարքի բնույթի վերաբերյալ:

Երկրորդ գլուխը՝ <Մաքսանենգութեանը նպաստող գործոնները> վերտառութեամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ <Մաքսանենգութեանը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները> վերտառութեամբ, հեղինակը անրադարձ և ապա խորը վերլուծութեան է ենթարկում ինչպէս օբյեկտիվ, այնպէս էլ սուբյեկտիվ գործոնները՝ տալով դրանց սպառիչ լուծումները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ <Մաքսանենգութեան առանձին դրսևորումներին նպաստող գործոնները> վերտառութեամբ, հեղինակը հստակ նշում է դրանց առանձին տեսակները և առանձնահատկությունները, որոնք կենսական կարևոր նշանակություն ունեն նպաստող գործոնների շարքում:

Երրորդ գլուխը՝ <Մաքսանենգութեան կանխարգելումը> վերտառութեամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ <Կանխարգելման ընդհանուր օսցիալական միջոցները> վերտառութեամբ, հեղինակը նախ ներկայացնում է ընդհանուր միջոցների շրջանակը, ապա առաջարկում այդ ուղղութեամբ կոնկրետ մարտավարական միջոցառումների պլան:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ <Կանխարգելման հատուկ կրիմինալօգիական միջոցները> վերտառութեամբ, հեղինակը հստակ նշում է այն միջոցները, որոնց առավել ինտենսիվ և հետևողական կատարման դեպքում հնարավոր է հասնել շոշափելի հաջողութեան:

Ատենախոսութեան **եզրակացութեան** մեջ հեղինակն արել է ներքոհիշյալ եզրահանգումները, բերել համապատասխան առաջարկություններ:

1. «Մաքսային սահմանով տեղափոխում» հասկացությունը սկզբուն-

քային նշանակություն ունի մաքսանենգության ավարտված և չավարտված փուլերի սահմանազատման տեսանկյունից: ՀՀ քրեական գործող օրենսդրության տառացի մեկնաբանությունից հետևում է, որ մաքսանենգությունն ավարտվում է, երբ համապատասխան առարկաները ֆիզիկապես տեղափոխվում են ՀՀ մաքսային սահմանով:

2. ՀՀ քր. օր.-ի իմաստով, մաքսանենգության համապատասխան տեսակների սուբյեկտ կարող են հանդիսանալ բոլոր այն պաշտոնատար անձինք, ովքեր, ի տարբերություն այլ քաղաքացիների, օժտված են մաքսային սահմանով ապրանքներ, նյութական կամ այլ արժեքներ կամ այլ առարկաներ տեղափոխելու հետ կապված լիազորություններով կամ արտոնություններով: Ուստի կառավարչական գործառույթներ իրականացնող այն անձինք, ովքեր օժտված չեն նման լիազորություններով կամ արտոնություններով, մաքսանենգության տվյալ տեսակի սուբյեկտ համարվել չեն կարող:

3. Եվրոպական Միության անդամ որոշ պետություններում (Սան-Մարինո, Հոլանդիա և այլն) մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն ընդգրկում են տվյալ արարքի դրսևորումների բավականին լայն շրջանակ, իսկ մյուսներում (Գերմանիա, Շվեյցարիա, Ֆրանսիա և այլն) քրեորեն պատժելի են համարվում դրանց միայն առավել վտանգավոր տեսակները: Ընդ որում, ոչ բոլոր երկրների քրեական օրենքներն են պարունակում հատուկ նորմ, որը պատասխանատվություն է սահմանում տնտեսական մաքսանենգության համար: Միևնույն ժամանակ, ԵՄ որոշ երկրներում (Գերմանիա, Լեհաստան, Շվեդիա և այլն) մաքսանենգության համար նախատեսված են չափազանց մեղմ, մյուսներում (Սան-Մարինո, Ֆրանսիա և այլն) բավականին խիստ պատիժներ:

4. Եվրասիական Տնտեսական Միության անդամ հանդիսացող պետություններում մաքսանենգությունը քրեականացված է կա՛մ տվյալ արարքի համար պատասխանատվություն նախատեսող մեկ հոդվածով (օրինակ՝ Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում), կա՛մ երկու ինքնուրույն հանցակազմերով, որոնցից մեկը պատասխանատվություն է սահմանում, այսպես կոչված, տնտեսական մաքսանենգության, մյուսը՝ այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է (օրինակ՝ Ղազախստանի Հանրապետությունում), կա՛մ երկուսից ավել հոդվածներով, որոնցում առավել հստակեցված են քննարկվող հանցագործության օբյեկտներն ու առարկաները (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում): Մինչդեռ, մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման առումով անհրաժեշտ է միասնական մոտեցում: Ընդ որում, առավել նպատակահարմար է հայաստանյան և ռուսաստանյան օրենսդիրների մոտեցումը, որի պարագայում հստակ սահմանա-

զատված են հանցավոր տվյալ դրսևորման օբյեկտները և առարկաները:

5. Ներկայումս գոյություն չունի մաքսանենգության դեմ պայքարին վերաբերող ունիվերսալ միջազգային իրավական փաստաթուղթ: Դրան առնչվող իրավակարգավորումներն արտացոլված են միջազգային տարբեր պայմանագրերում, որոնք կապված են թմրանյութերի, գենքի, մշակութային արժեքների, կեղծ դրամական միջոցների, պոռնկագրական բնույթի նյութերի, ակոհոլային արտադրանքի և մի շարք այլ ապրանքների, առարկաների ու նյութերի ապօրինի ներմուծման կամ արտահանման հիմնախնդիրների հետ: Մինչդեռ, խիստ հրատապ և անհրաժեշտ է այդ երևույթի դեմ պայքարին վերաբերող առանձին միջազգային իրավական փաստաթղթի (օրինակ՝ «Մաքսանենգության դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիայի) ընդունումը:

6. Չնայած, մաքսանենգությունը՝ որպես միջազգային բնույթի հանցագործություն, հայտնի է շատ վաղուց, դրա միջազգայնորեն ընդունված միասնական հասկացության սահմանում ևս գոյություն չունի: Համապատասխան սահմանումներ հիմնականում տրված են ներպետական օրենսդրական ակտերում, որոնք, սակայն, աչքի են ընկնում բազմազանությամբ և առաջացնում տարամեկնաբանություններ: Ուստի, առաջարկվում է դրա հետևյալ սահմանումը՝ մաքսանենգությունը ապրանքների և առարկաների ապօրինի տեղափոխումն է մաքսային սահմանով, որը կարող է իրականացվել մաքսային հսկողությունից թաքցնելու կամ այն շրջանցելու ցանկացած եղանակով:

7. 2012-2014 թթ. ընթացքում ՀՀ-ում նկատվում է բացահայտված մաքսանենգությունների մասնաբաժնի էական նվազում, ինչը գլխավորապես կապված է ոչ թե իրավապահ մարմինների գործունեության թերությունների և բացթողումների ավելացման, այլ նշված հանցագործությունների հաշվառման-գրանցման աշխատանքների բարելավման (լատենտայնության մակարդակի նվազեցման) հետ:

8. ՀՀ-ում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում բավականին մեծ մասնաբաժին ունեն օտարերկրացիները, որոնց շարքում գերակայում են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները: Ընդ որում, եթե ՀՀ քաղաքացիները հիմնականում քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ, մշակութային կամ այլ արժեքներ մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու համար, ապա օտարերկրացիները (հատկապես՝ իրանցիները) մեծ մասամբ կատարում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգություն:

9. Քննարկվող հանցանքները կատարողների արժեքային կողմնորոշումներն ու պահանջումները, որպես կանոն, կապված են եղել ճոխ կյանք վարելու ցանկության հետ, իսկ նրանց հանցավոր վարքագծի շարժա-

ոիթները գրեթե միշտ դրսևորվել են ապօրինի ճանապարհով հնարավորինս կարճ ժամկետում նյութական մեծ օգուտ քաղելու ձգտման մեջ:

10. Հայաստանի Հանրապետությունում մաքսանենգությանը նպաստող օբյեկտիվ գործոնները հանգում են հետևյալին՝

– հայաստանցիների գիտակցության մեջ արմատավորվել է ամեն կերպ հարստանալու ձգտումը, նրանց շրջանում լայն տարածում է ստացել պատկերացումն այն մասին, որ կենսական խնդիրների լուծման համար հակաիրավական որոշ արարքների կատարումը երբեմն ոչ միայն ընդունելի է, այլև անհրաժեշտ կամ անխուսափելի,

– հանցածին էական նշանակություն ունի երկրի բնակչության սոցիալ-տնտեսական շերտավորումը, քանի որ մարդիկ ոչ մի կերպ չեն կարողանում համակերպվել այն մտքին, թե առանձին սոցիալական խմբերի եկամուտների ծավալներն անարդարացիորեն կարող են էապես տարբերվել,

– բացասական լուրջ ազդեցություն ունեն համապատասխան պարտադիր վճարումների (օրինակ՝ ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքերի և այլն) չարդարացված մեծ չափերը, ինչը հաճախ գործարարների կողմից ստվերային տնտեսության դաշտ տեղափոխվելու պատճառ է հանդիսանում,

– ազգային տնտեսության ցածր մրցունակության, երկրում արտադրվող ապրանքների ցածր որակի և բարձր ինքնարժեքի պատճառով շատ հայրենական գործարարներ արտասահմանյան ֆիրմաների կողմից դուրս են մղվում շուկայից՝ ստիպված լինելով դադարեցնել իրենց գործունեությունը,

– հանցածին լուրջ նշանակություն ունի նաև պետական որոշ ծառայողների կոռուպացվածությունը, մաքսանենգությամբ զբաղվողների հետ նրանց «գործընկերական» հարաբերությունների ձևավորումը, որով պայմանավորված, տեղի է ունենում նաև տնտեսության և դրա կառավարման ոլորտների քրեականացում, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները թաքցնելու, հարկերը, սուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարելուց խուսափելու համար,

11. Հայաստանի Հանրապետությունում քննարկվող հանցագործությանը նպաստող սուբյեկտիվ բնույթի հիմնական գործոնները հանգում են հետևյալին՝

– մաքսանենգություն կատարողներին բնորոշ են գլխավորապես շահադիտական-սպառողական կողմնորոշումները, ցանկացած գնով հարստանալու, ճոխ կյանք վարելու, թանկարժեք առարկաների տիրապետելու ձգտումը, նրանց համոզմամբ, ազնիվ աշխատանքով, օրինապահ վարքագիծ դրսևորելով հնարավոր չէ իրենց պահանջմունքներին համապատասխանող կյանք վարելու համար անհրաժեշտ նախապայմաններ ստեղծել,

– քննարկվող հանցանքը կատարողներից շատերը ձգտում են տիրանալ ցանկալի նյութական արժեքների, որպեսզի բավարարված զգան անձա-

միջյան հարաբերություններում և գրավեն իրենց հետաքրքրող մարդկանց ու-
շադրությունն ու հաճույք ստանան սեփական գոյությունից, բարելավեն սե-
փական կարգավիճակը և բարձրանան իրենց համար ցանկալի հանդիսա-
ցող շրջապատի աչքերում, ստեղծեն կամ զարգացնեն սեփական բիզնեսը և
ընդլայնեն շփումների շրջանակը՝ մուտք գործելով շատերի կողմից «էլիտար»
համարվող շրջապատ, զերծ մնան աշխատանքի տեղավորվելու և արդար
աշխատանքով գումար վաստակելու համար լրացուցիչ, իրենց կարծիքով, ա-
նիմաստ ջանքեր գործադրելուց, վարեն թանկարժեք ավտոմեքենա, հագնեն
բրենդային հագուստ, կրեն ճոխ բջջային հեռախոս և օգտվեն կյանքի այլ,
նախկինում անհասանելի բարիքներից, շոայլություններ թույլ տան իրենց և
սեփական հաճույքների համար մեծ գումարներ ծախսեն:

12. Հայաստանի Հանրապետությունում կարևորվում են մաքսանեն-
գության ընդհանուր-սոցիալական կանխարգելման հետևյալ միջոցառումնե-
րը՝

- երկրում առկա տնտեսական ճգնաժամի հաղթահարումը և ազգային
դրամի արժեզրկման մակարդակի նվազեցումը, բնակչության սոցիալ-տնտե-
սական շերտավորման մեղմումը, գործազրկության մակարդակի նվազեցու-
մը և անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավումը,

- քաղաքական կայունության ապահովումը, որը կնպաստի սոցիալա-
կան արդարության կենսագործմանը, կոռուպցիայի և արատավոր այլ
երևույթների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը և, վերջին
հաշվով՝ նաև հանցավորության (այդ թվում՝ մաքսանենգությունների) կան-
խարգելմանը,

- ապրանքների արտադրության, դրանց ներմուծման, արտահանման,
արդյունավետ սպառման և արդարացի բաշխման նոր, առավել կենսունակ ու
արդարացված ծրագրերի նախագծումը և կենսագործումը,

- մանր ու միջին բիզնեսի ձեռնարկման և զարգացման համար նպաս-
տավոր պայմանների ստեղծումը, այդ նպատակով որոշակի արտոնություն-
ների նախատեսումը,

13. Հայաստանի Հանրապետությունում հատկապես կարևորվում են
մաքսանենգության հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման հետևյալ
միջոցառումները՝

- օպերատիվ-հետախուզական համապատասխան միջոցառումների
պատշաճ կազմակերպումն ու իրականացումը, որոնց արդյունավետությունը
գլխավորապես պայմանավորված է դրանք անմիջականորեն իրականաց-
նողների տեղեկացվածության մակարդակով.

- տեղեկատվության ստացման աղբյուրների շարքում հատկապես
պետք է կարևորել միջպետական համագործակցության շրջանակներում այլ
պետությունների համապատասխան կառույցների կողմից տրամադրվող տե-

ղեկությունները, մաքսային սահմանին տեղադրված տեսաձայնագրառող տեխնիկական միջոցներով ստացվող տեղեկատվության մշտադիտարկման արդյունքները, իրավապահների հետ համագործակցող գաղտնի գործակալների հաղորդումները, ձեռքակալված կամ կալանավորված անձանց հարցաքննության նյութերը, ինչպես նաև «թեժ գծի» միջոցով տրված անանուն հաղորդումները.

– մաքսային հսկողության համար պատասխանատու պաշտոնատար անձանց և մաքսանենգություն կատարողների հանցավոր համագործակցության կանխարգելման առումով անհրաժեշտ է ձեռնարկել կազմակերպական և իրավական բնույթի համապատասխան միջոցառումներ, որոնք նվազագույնի կհասցնեն նրանց անմիջական շփումը.

Ատենախոսության սույն հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգության հասկացությունն ըստ ՀՀ քրեական օրենսդրության // Օրինականություն, № 85, 2014, էջեր 12-19:

2. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգություն կատարողի անձը բնութագրող առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում // Պետություն և իրավունք, թիվ 2 (68), 2015թ., էջեր 41-56:

3. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգության համար պատասխանատվության միջազգային իրավական կարգավորումները // Պետություն և իրավունք, թիվ 3-4 (69-70), 2015թ., էջեր 54-68:

4. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը Հայաստանի Հանրապետությունում // Պետություն և իրավունք, թիվ 1 (71), 2016թ., էջեր 76-86:

5. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգությունն ըստ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նյութերի ժողովածու: Եր., 2015թ., էջեր 402-432:

6. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգությանը նպաստող գործոնները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, № 4/214, 2017թ., էջեր 76-81:

7. Միրզոյան Գ.Ա. Մաքսանենգության կանխարգելման որոշ հիմնահարցեր // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2016թ., էջեր 314-325:

Резюме

ГОР АНДРАНИКОВИЧ МИРЗОЯН

КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ КОНТРАБАНДЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Настоящее диссертационное исследование посвящено изучению криминологических проблем контрабанды в Республике Армения. Основная цель исследования – дать общую характеристику контрабанды по внутригосударственному и уголовному законодательству зарубежных стран, представить международно-правовые нормы об ответственности за контрабанду, рассмотреть основные особенности личности исполнителя данного деяния, а также факторы, способствующие контрабанде и особенности ее предотвращения.

Положения, выдвинутые на защиту, представляют научную новизну и сводятся к следующему:

1. Рекомендуются принять меры, направленные на принятие международной конвенции “О борьбе с контрабандой” и в ее рамках дать следующее определение контрабанды: «Контрабанда – это незаконная транспортировка товаров, предметов или имущества через таможенную границу, которая осуществляется любым способом, направленным на сокрытие их от таможенного контроля или обход таможенного контроля».

2. При подсчете процента раскрытия случаев контрабанды по официальным статистическим данным РА для получения реальной и объективной картины следует учитывать количество фактически зарегистрированных и раскрытых преступных деяний только в отчетном году.

3. С целью обеспечения эффективности борьбы с контрабандой важно учитывать следующие основные факторы, способствующие проявлению данного вида преступности в РА и препятствующие эффективности борьбы с ней: во многих случаях неоправданно большие размеры налогового бремени, низкая конкурентоспособность национальной экономики, низкий профессиональный уровень значительной части работников таможенных и

правоохранительных органов и активное участие значительной их части в организованной преступной деятельности.

4. В РА выделяются следующие меры по специально-криминологическому предотвращению контрабанды: надлежащая организация оперативно-розыскных мероприятий, активизация получения информации от таможенных органов других государств, широкое применение технических средств и “горячей линии”, повышение профессиональной подготовки сотрудников таможенных органов.

5. В рамках превентивных мероприятий необходимо уделять особое внимание, в частности, должностным лицам, занимающимся по долгу службы ввозом или вывозом товаров, предметов или денежных средств, таможенным агентам, водителям, рабочим, которые непосредственно обеспечивают транспортировку этих предметов, лицам, привлеченным в прошлом к ответственности за подобные деяния.

6. С целью предотвращения контрабанды необходимо отказаться от идеи неприкосновенности соответствующих лиц, обладающих особым статусом, и установить по возможности более широкий, но четкий круг правовых предпосылок по подверганию их таможенному контролю.

7. В целях повышения эффективности борьбы с контрабандой радиоактивных материалов необходимо разработать и принять проект закона РА «О приобретении, хранении, использовании, передаче, продаже, импорте, экспорте, хранении, транспортировке, переработке, обезвреживании или уничтожении радиоактивных материалов, отходов и приборов, содержащих радиоактивные вещества». Кроме того необходимо периодически дорабатывать соответствующие списки, установленные регулирующими их оборот законодательными и подзаконодательными актами, включая в них новые виды радиоактивных веществ, по тем или иным причинам не включенные в эти списки.

Summary
MIRZOYAN GOR ANDRANIK
CRIMINOLOGICAL PROBLEMS OF CONTRABAND IN
REPUBLIC OF ARMENIA

The present dissertation research is devoted to the study of criminological problems of contraband in the Republic of Armenia. The main purpose of the study is to give the general characteristics of contraband under the intra-state and criminal legislation of foreign countries, to present international-legal norms on the responsibility for contraband, to consider the main features of the perpetrator's personality, as well as the factors contributing to contraband and the specifics of its prevention.

The provisions put forward for the defense represent scientific novelty and are the following:

1. It is recommended to undertake measures directed at the adoption of the international convention "On Struggle against Contraband" and within its framework to give the following definition to contraband: "Contraband is the illegal transportation of goods, items or property across the customs border, which is carried out in any way directed at their concealment from customs control or bypass of the customs control."

2. When calculating the percentage of the disclosure of contraband cases according to official statistical data of the Republic of Armenia, in order to get a real and objective picture, it is necessary to take into account the number of actually registered and disclosed criminal acts only in the reporting year.

3. In order to ensure the effective struggle against contraband it is important to take into account the following main factors contributing to the development of the given type of criminality in the Republic of Armenia and impeding the effectiveness of struggle against it: in many cases, unreasonably large amounts of tax burden, the low competitiveness of the national economy, low professional level of a significant part of employees of customs and law

enforcement bodies and the active participation of their significant part in organized criminal activities.

4. The following measures for the special-criminological prevention of contraband are distinguished in the Republic of Armenia: the proper organization of operational-search activities, the activation of getting information from the customs authorities of other states, the extensive use of technical means and “hotline”, the professional training of employees of customs bodies.

5. Within the framework of preventive measures special attention should be paid, in particular, to officials dealing on service duty with the import or export of goods, items or money, as well as to customs agents, drivers and workers who directly provide the transportation of these items to the persons who were called to account for such acts in the past.

6. In order to prevent contraband it is necessary to refuse from the idea of the inviolability of the relevant persons with special status and to establish, as far as possible, broader but clearer range of legal prerequisites for subjecting them to customs control.

7. In order to increase the effectiveness of struggle against contraband of radioactive materials, it is necessary to elaborate and adopt a draft law “On Acquisition, Storage, Use, Transfer, Sale, Import, Export, Storage, Transportation, Processing, Neutralization or Destruction of Radioactive Materials, Wastes and Devices Containing Radioactive Substances”. In addition, it is necessary to periodically revise the corresponding lists set by the legislative and subordinate legislation acts regulating their turnover, including new types of radioactive substances for these or those reasons not included in these lists.